ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2021թ. հունվարի 29-ին ստորագրված թիվ ՀՀՀ-ԳՀԾՁԲ-21/4-1 պայմանագրին լրացում կատարելու մասին

Ք. Երևան 14 սեպտեմբերի 2021թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ Գնորդ), ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա մի կողմից, և

«Լայթ Լայֆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ նաև՝ Վաճառող), ի դեմս տնօրեն Ա. Թումանյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի և 466-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ինչպես նաև Կողմերի միջև 2021թ. հունվարի 29-ին ստորագրված թիվ ՀՀՀ-ԳՀԾՁԲ-21/4-1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետի պահանջները, ստորագրեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Կողմերը հանձայնեցին.

1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հեռուստատեսային արտադրանքի նկարահանումների համար անհրաժեշտ լրացուցիչ տեխնիկայի վարձակալության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայությունները և վճարել դրա համար:
2. Սույն Համաձայնագրով նախատեսված Ծառայությունները մատուցվում են մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
3. Սույն Համաձայնագրով նախատեսված Ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, համաձայն Հավելված 1-ով սահմանված նախահաշվի:
4. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում:
5. Պայմանագրի ցանկացած դրույթ կիրառելի է սույն Համաձայնագրի նկատմամբ այնքանով, որքանով այլ բան նախատեսված չէ սույն Համաձայնագրով:
6. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:
7. Համաձայնագրի Հավելված 1-ը հանդիսանում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:
8. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

9. Սույն Համաձայնագիրը ստորագրված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0047
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն

«Լայթ Լայֆ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, գ. Հաղթանակ 1-ին նրբ. Տուն 2
ՀՎՀՀ՝ 01262291
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050422259821001

Ա. Թումանյան
Տնօրեն

Հավելված 1
2021 թվականի սեպտեմբերի 14-ին ստորագրված թիվ ՀՀՀ-ԳՀԾՁԲ-21/4-1 պայմանագրին լրացում կատարելու մասին Համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության անվանումը	Քանակ	Արժեք/ՀՀ դրամ
Ձայնային սարքավորումների Վարձակալության ծառայություններ	1	2 000 000
ԼԷԴ էկրանների Վարձակալության ծառայություններ	1	2 000 000
ԼԷԴ էկրանների Վարձակալության ծառայություններ	1	1 000 000

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0047
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն

«Լայթ Լայֆ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, գ. Հաղթանակ 1-ին նրբ. Տուն 2
ՀՎՀՀ՝ 01262291
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050422259821001

Ա. Թումանյան
Տնօրեն